01/10.1/7938-09
2009-11-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հակոբ Հակոբյանի և Սամվել Բալասանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2008 թվականի օգոստոսի 21-ին ընդունված «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվել է, որ 2010 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ԱՏԳ ԱԱ 2009, 2201, 2202, 2203 ծածկագրերին դասվող ապրանքների արտադրության

ծավալների հաշվառումն իրականացվելու է համապատասխան ծախսաչափային հանգույց-ների (ներառյալ հաշվիչների, այսուհետ՝ ծախսաչափային հանգույցներ) միջոցով։ Օրենքի ընդունման նպատակն օրենքով սահմանված ապրանքատեսակների իրացման շրջանառությունների նկատմամբ ընթացիկ հսկողության իրականացման «գործիքի» ներդրումն է։ Այս տեսանկյունից անընդունելի է օրենքում նշված մյուս ապրանքատեսակնե-րից Հայաստանի Հանրապետությունում արտադրվող գարեջրի նկատմամբ տարբերակված մոտեցումը՝ ծախսաչափային հանգույցների ներդրումից հրաժարվելն առանց իրացման շրջանառությունների պատշաճ հսկողության մեխանիզմի։

Ներկայացված օրենքի նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավա-կան ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի պահանջներին։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հա-յաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-731-02.10.2009-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի վերջին պարբերությունից հանել «2203» թիվը։

Հոդված 2. Օրենքի 28.6 հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերություններից հանել «2203» թիվը։

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2010թվականի հունվարի 1-ից։

Հիմնավորում

«Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի անհրաժեշտության մասին

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է հետրեւալ ներքոնշյալ կետերով.

1. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով ՀՀ տարածքում գործում է «Ակցիզային» պահեստ ռեժիմը՝ որը վերահսկվում է հարկային ծառայողի կողմից։ Այս եւ տնտեսական, ինչպես նաեւ ֆինանսական ճգնաժամի պարագայում անիմաստ եւ աննպատակահարմար է

դառնում հսկայական գումարներ տրամադրել ծախսաչափային հանգույցների ձեռք բերման համար։